1. կառուցվել է խմելու ջրի ջրագիծ, արժեքը՝ 342581272 դրամ,
2. կառուցվել և բարեկարգվել է Սբ. Հովհաննես եկեղեցու տարածքը:

➤ **Հացավան բնակավայր.**

1. բարելավվել են արոտները,
2. փոխվել են դպրոցի դռները և պատուհանները, արժեքը՝ 2700000 դրամ:

➤ **Մուցք բնակավայր.**

1. նորոգվել են դաշտամիջյան ճանապարհները,
2. վերանորոգվել է ոռոգման ջրի ջրատարը,
3. վերանորոգվել է խմելու ջրի ջրատարը,
4. ամրացվել է գերեզմանատան ցանկապատը:

➤ **Նորավան բնակավայր.**

1. իրականացվել են արոտների ջրարբիացման համար նախատեսված ջրագծի վերանորոգման աշխատանքներ,
2. վերանորոգվել է կոյուղագիծը,
3. շահագործման է հանձնվել կաթի ընդունման կետը,
4. ավարտվել են մանկապարտեզի շինվերանորոգման աշխատանքները:

➤ **Շաղատ բնակավայր.**

1. կառուցվել է ֆուտբոլի դաշտը,
2. վերանորոգվել են խմելու ջրի օրվա կարգավորիչ ջրամբարները,

5. կառուցվել է դպրոցի խաղադաշտը:

➤ **Շաքի բնակավայր.**

1. բարեկարգվել է բնակավայրի կենտրոնը, տեղադրվել են նստարաններ, կանգառ, աղբամաններ,
2. Շաքի - Սիսիան ճանապարհների խաչմերուկում վերանորոգվել է կանգառը, տեղադրվել են նստարան և գիշերային լուսավորություն,
3. ընդլայնվել է գիշերային լուսավորության ցանցը,
4. նորոգվել են ներհամայնքային ճանապարհները,
5. գերեզմանատանը անցկացվել է էլեկտրական հոսանք:

➤ **Շենաթաղ բնակավայր.**

1. վերակառուցվել է ջրամատակարարման համակարգը, արժեքը՝ 353153200 դրամ,
2. վերանորոգվել է կոլտնտեսային տան հանդիսասրահը, արժեքը՝ 2574000 դրամ:

➤ **Ույծ բնակավայր.**

1. նորոգվել են ներհամայնքային ճանապարհները,
2. մասնակի վերանորոգվել է ոռոգման ներքին ցանցը,
3. մաքրվել են սելավատարները և գետի հունը,
4. վերացվել են բնակավայրում առկա 3 աղբավայրերը:

➤ **Սալվարդ բնակավայր.**

1. փոսայցվել են միջհամայնքային և ներհամայնքային ճանապարհները 5կմ ընդանուր երկարությամբ,
2. վերակառուցվել են ցերեկային լույսերը:

➤ **Վաղատին բնակավայր.**

1. արոտավայրերում կատարվել են ջրարբիացման աշխատանքներ,
2. կատարվել է խմելու ջրի ներքին ցանցի մասնակի վերանորոգում,
3. իրականացվել են շաբաթօրյակներ,
4. գյուղամիջյան ճանապարհներում իրականացվել են փոսայցման աշխատանքներ,
5. որոշակի աշխատանքներ են կատարվել ոռոգման ցանցի վրա:

➤ **Տոլորս բնակավայր.**

1. ամբողջությամբ վերանորոգվել է դպրոցի տանիքը, կառուցվել է ջրագիծը և սանհանգույցը, ամբողջությամբ վերանորոգվել է ճաշարանը՝ փոխվել են դռները և լուսամուտները, հատակը ամբողջությամբ սալիկապատվել է,
2. արոտներում տեղադրվել են ջրախմոցներ,
3. փողոցային լուսավորությունն ապահովելու համար տեղադրվել են հենասյուներ,
4. ծածկվել են աղբավայրեր և անցկացվել են շաբաթօրյակներ,
5. կատարվել են կոյուղագծի վերանորոգման աշխատանքներ,
6. վերանորոգվել են խմելու և ոռոգման ջրի ջրագծերը,
7. փոսայցվել են ներհամայնքային ճանապարհները:

➤ **Տորունիք բնակավայր.**

1. կատարվել են կենցաղի տան կահավորման և ներքին հարդարման վերանորոգման աշխատանքներ, արժեքը՝ 202900 դրամ:

ԿՐԹՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ, ՍՊՈՐՏԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՈՒ

2017 թվականին իրականացված աշխատանքների շնորհիվ նկատելի առաջընթաց է ապահովվել համայնքի կրթական և մշակութային կյանքում.

- Սիսիանի համայնքում գործող նախակրթարանները եղել են մշտապես ուշադրության կենտրոնում, բազմաթիվ խնդիրներ լուծում են ստացել: 2017թ. նախադպրոցական ուսումնական հաստատություններ են հաճախել 430 երեխաներ, իսկ արտադպրոցական հաստատություններ՝ 612,
- թիվ 4 ՆՈՒՀ-ի խմբասենյակները համալրվել են անհրաժեշտ պարագաներով, կահույքով, խաղալիքներով: Փոխվել են ջրատար խողովակները, խոհանոցում տեղադրվել է ջրատաքացուցիչ,
- «ԱՄՆ-ի Հայրենիք միության» գործադիր մարմնի ֆինանսավորմամբ՝ թիվ 1 նախակրթարանում անցկացվել է ջեռուցման համակարգ, ծրագրի արժեքը՝ մոտ 3մլն դրամ, բարերարների ֆինանսավորմամբ փոխվել է հին պատուհանների մի մասը,

- Վորլդ վիժն կազմակերպության հետ համատեղ ձեռք է բերվել խոհանոցային պարագաներ և գույք: Վերանորոգվել և ժամանակակից գույքով կահավորվել է ևս մեկ խմբասենյակ թիվ 2 ՆՈՒՀ-ում,
- հոկտեմբերի 1-ից Սիսիանի թիվ 3 ՆՈՒՀ-ում գործում է նախակրթարան՝ տարածշրջանի սոցիալապես անապահով ընտանիքների 5-6 տարեկան երեխաների նախադպրոցական կրթությունն ապահովելու նպատակով: Շինարարական աշխատանքներն իրականացվել են կրթության և գիտության նախարարության ծրագրերի կենտրոնի նախադպրոցական կրթության միկրոծրագրի շրջանակներում: Նախակրթարանն աշխատում է 4.5 ժամյա ռեժիմով, անվճար սկզբունքով և ապահովված է նախաճաշով: Դաստիարակները ընտրվել և ստացել են համապատասխան վերապատրաստում: Աշխատանքների ընդհանուր բյուջեն կազմել է 7.154.000 դրամ, որից՝ 5.165.800-ը ծրագրի դրամաշնորհն է, իսկ 1.988.600 դրամը՝ համայնքի ներդրումը,
- թիվ 4 նախակրթարանին են հատկացվել երկհարկանի մահճակալներ,
- մտահոգ բարեբանների շնորհիվ նախակրթարանի ևս երկու խմբասենյակներ վերանորոգվել են,
- բացի համայնքային ենթակայության ՆՈՒՀ-երից, Նորավանի գյուղական համայնքի վերաբացված նախակրթարանին տրամադրվել է խոհանոցային գույք և երեխաներին՝ խաղալիքներ:

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

- Ապահովվել է սիսիանցի տաղանդաշատ երեխաների մասնակցությունը հանրապետական և միջազգային փառատոններում,
- Սիսիանի էմմա Ասյանի անվան երաժշտական դպրոցի մանկական երգչախմբի 23 սաները մասնակցել են Թբիլիսիում կայացած երգի փառատոնին,
- «Գրանդ» պարային համույթը մասնակցել է Վրաստանում կայացած պարի փառատոնին,
- Սիսիանի արվեստի դպրոցի 36 սաներ մասնակցել են Դիլիջան քաղաքում կայացած «Մինորա» մշակութային կենտրոնի կողմից կազմակերպված «Դիլիջան 2017» երաժշտական փառատոնին,
- ՀՀ պետական, հիշատակի օրերի, մասնագիտական տոների և երիտասարդների ժամանցի հետ կապված, համայնքում կազմակերպվել է նորովի և յուրովի մոտեցմամբ ավելի քան 41 միջոցառումներ,
- կազմակերպվել են սպորտային-առողջարարական մասսայական միջոցառումներ, դրանք նախապատրաստվել և անց են կացվել պատշաճ մակարդակով,
- Սյունիքի մարզում և Սիսիանի տարածաշրջանում ֆուտբոլի զարգացմանն ու կատարելագործմանն աջակցելու նպատակով Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի և ՈՒԵՖԱ-ի կողմից իրականացվող համատեղ ներդրումային ծրագրի շրջանակներում մարզադաշտի տարածքում կառուցվում է ֆուտբոլի մասնագիտացված դպրոց: Մարզադաշտը կունենա հազար նստատեղ, միջազգային չափորոշիչներին համապատասխան վազքուղի, հեծանվաուղի: Սիսիանի ֆուտբոլի դպրոցում կմարզվեն 6-17 տարեկան 180 պատանիներ և աղջիկներ: Ծրագրի արժեքը կազմում է մոտ 370 մլն դրամ,
- դպրոցական օլիմպիադաների մարզային և հանրապետական փուլերին, մրցույթ-փառատոններին և մարզական խաղերին երեխաների մասնակցությունն ապահովելու համար տրամադրվել են տրանսպորտային միջոցներ և այլ գործուղման ծախսեր,
- օժանդակություն է ցուցաբերվել համայնքի կողմից հիմնադրված Սիսիանի մեծահասակների կրթության կենտրոնին,
- Եվրոպական միության՝ Արևելյան գործընկերության «Մշակույթ և ստեղծարարություն» ծրագրի «Ստեղծարար քաղաքներ և մարզեր» նախաձեռնության շրջանակում Սիսիանի համայնքն ընտրվել է որպես հաղթող: Ծրագրին մասնակցելու համար դիմել էր 14 մարզային քաղաք և մարզ: «Ստեղծարար քաղաքներ և մարզեր» նախաձեռնության շրջանակում հատուկ ուշադրություն է դարձվել քաղաքի մշակութային և ստեղծարար ոլորտների, զբոսաշրջության զարգացման և այլ համայնքների հետ կապերի ձևավորմանը:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ

- Համայնքապետարանում կանոնակարգվել են սոցիալական աջակցության աշխատանքները, չի անտեսվել ինչպես Սիսիանի, այնպես էլ բնակավայրերից համայնքապետարան դիմած քաղաքացիներին հուզող խնդիրներից և ոչ մեկը, շատերը բժշկական օգնություն են ստացել ինչպես մարզային, այնպես էլ մայրաքաղաքի տարբեր բժշկական հաստատություններում,
- համայնքապետարանը սոցիալապես անապահով 34 ընտանիքների տրամադրել է դրամական օգնություն, տարեմուտի առթիվ համայնքի դպրոցների և նախակրթարանների ավելի քան 4800 երեխաներ ստացան նվեր-փաթեթներ,
- հիմնվել է «Յերեկային կենտրոն»՝ միայնակ ծերերի և հաշմանդամների համար, որտեղ նրանք ստանում են անվճար բուժօգնություն և սնունդ: Կենտրոն հաճախող անձիք հնարավորություն ունեն անվճար

- բանակի օրվա և տարեմուտի կապակցությամբ աջակցություն է ցուցաբերվել Սիսիանում տեղակայված գնդին, սնունդ և հիգիենայի պարագաներ են տրվել սահմանային հենակետերում ծառայող զինվորներին: Գնդի հետ համատեղ կազմակերպվել են մշակութային միջոցառումներ,
- զոհված, վիրավոր ազատամարտիկների, սոցիալապես անապահով ընտանիքների, ինչպես նաև ծնողազուրկ 65 երեխաներ ամռան ամիսներին հանգստացել են Հանքավանի ճամբարներում, որոնց տրանսպորտային ծախսերը հոգացել է համայնքապետարանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ, ԱՎԱԳԱՆԻ ԵՎ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

- 2017թ. ընթացքում տեղի է ունեցել ավագանու 9 հերթական և 1 արտահերթ նիստ: Ընդունվել են ավագանու 89, համայնքի ղեկավարի 638 որոշումներ, կայացվել են համայնքի ղեկավարի 313 կարգադրություններ, աշխատակազմի քարտուղարի 152 հրամաններ ու խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 13 նիստ,
- քաղաքացիներից և իրավաբանական անձանցից ստացվել են 354 դիմումներ և գրություններ, որոնց սահմանված կարգով ընթացք է տրվել,
- համայնքի ղեկավարի մոտ կազմակերպվել է 833 քաղաքացիների ընդունելություն,
- համայնքային բոլոր կազմակերպություններում իրականացվել է ներքին աուդիտ,
- ակտիվացել են նախագորակոչային և գորակոչային տարիքի երիտասարդների հետ տարվող աշխատանքները, ավելի է ակտիվացել բանակի հետ փոխադարձ կապը, մշտապես մասնակցություն է ցուցաբերվել տարվա ընթացքում կազմակերպված զորահավաքներին,
- համայնքապետարանի անմիջական միջնորդությամբ ավելացել են տարբեր զորամասերում պայմանագրային զինծառայության մեջ ընդգրկվածների թիվը,
- համայնքապետարանի ողջ անձնակազմը մասնակցել է ՀՀ նախագահին կից գլխավոր ռազմական տեսուչի կողմից անցկացված ուսումնական վարժական հավաքի:

ՖԻՆԱՆՍԱՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՈՒ

- 2017 թվականի խոշորացված համայնքի միավորված բյուջեի եկամուտների տարեկան կատարողականը կազմում է 100%՝ պլանավորված 828621,4 հազար դրամի դիմաց 826560,1 հազար դրամ: Սեփական եկամուտները տարեկան պլանավորված 271783,5 հազար դրամի դիմաց կատարվել են 271621,0 հազար դրամով՝ 100 %-ով: Սեփական եկամուտներից հողի հարկի կատարողականը 105,3% է, պլանավորված 71353,6 հազար դրամի դիմաց կազմելով 75143,0 հազար դրամ (3789,4 հազար դրամ գերակատարում), գույքահարկի կատարողականը 102,5% է, պլանավորված 68658,5 հազար դրամի դիմաց կազմելով 70420,5 հազար դրամ (1762,0 հազար դրամ գերակատարում): Տեղական տուրքերը կատարվել են 102,2%-ով, համայնքի բյուջե մուտքագրման ենթակա պետական տուրքերը՝ 114,1%-ով, գույքի և հողի վարձակալությունից եկամուտները 97,2%-ով,
- համայնքի վարչական բյուջեի ծախսերի կատարողականը 838246,6 հազար դրամի դիմաց կազմել է 787795,6 հազար դրամ՝ 94%,
- համայնքային սեփականության գույքի և հողի օտարումից եկամուտները 4912,5 հազար դրամի դիմաց կազմել է 13485,5 հազար դրամ,
- ըստ տնտեսագիտական հոդվածների ծախսերը կատարվել են աշխատավարձի գծով 99,7%-ով, ծառայությունների և ապրանքների ձեռքբերման ծախսերը կատարվել են 87%-ով, սուբսիդիաները կատարվել են 96,5%-ով, դրամաշնորհները՝ 100%-ով, սոցիալական նպաստները 77%-ով, այլ ծախսերը՝ 26%-ով,
- ֆինանսական ակտիվների գծով ծախսերը (Հիմնական միջոցների ձեռքբերման, կառուցման և կապիտալ վերանորոգման ծախսեր) կատարվել է 65,6%-ով,
- 31.12.2017թ. դրությամբ խոշորացված համայնքի պարտքը կազմում է 31500,0 հազար դրամ,
- բյուջեի մնացորդը 31.12.2017 թ. դրությամբ կազմում է 89726,1 հազար դրամ, որից վարչական մասում՝ 48389,7 հազար դրամ, ֆոնդային մասում՝ 41336.4 հազար դրամ:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի 2017թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվության հանրային բաց լսումների վերաբերյալ

Հանրային լսումները սկսվեց 2018 թվականի փետրվարի 23-ին ժամը 11⁰⁰-ին, համայնքապետարանի դահլիճում:

Հանրային լսումները արձանագրում է համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական և սոցիալ տնտեսական զարգացման բաժնի առաջատար մասնագետ Դ. Այվազյանը:

Լուսումներին ներկա են մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության վարչության, Սյունիքի մարզի անասնաբուժական ծառայության, գյուղատնտեսության զարգացման հիմնադրամի մարզային գրասենյակի, ինչպես նաև համայնքում գործող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, ավագանու անդամներ, վարչական ղեկավարներ, մի շարք կազմակերպությունների տնօրեններ, հաշվապահներ, այլ աշխատակիցներ և համայնքի բնակիչներ:

Ողջունի խոսքով ներկաներին դիմեց համայնքի ղեկավարի տեղակալ Վ. Իվանյանը:

Համայնքապետարանի 2017թ.-ի ընթացքում կատարած աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունը ներկայացրեց համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Վ. Միրաբյանը:

Համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական և սոցիալ տնտեսական զարգացման բաժնի պետ Գրետա Թունյանը ներկայացրեց 2017 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը:

Հանրային քննարկման ժամանակ մասնակիցների կողմից ելույթներ և հարցեր չեղան:

Համայնքապետարանի պատվավոր նախագահ



Վ. Միրաբյան

Արձանագրեց՝

Աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական և սոցիալ տնտեսական զարգացման բաժնի առաջատար մասնագետ՝

Դ. Այվազյան

Ք. Սիսիան

23.02.2018թ.



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

ՈՐՈՇՈՒՄ

13 մարտի 2018 թվականի թիվ 22-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի ԹԻՎ 22(Ա) ՈՐՈՇՈՒՄԸ
ՉԵՂՅԱԼ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ և 75-րդ հոդվածներով ու հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով 13 կողմ, - դեմ, - ձեռնպահ

Սիսիանի համայնքի ավագանին որոշում է՝

1. Չեղյալ ճանաչել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 12-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի կազմում միավորված նախկին Աշոտավանի համայնքի «Աշոտավանի մանկապարտեզ» ՓԲԸ-ն, Բռնակոթի, Շաղատի, Շաքիի, Դարբասի, Աղիտուի, Ույծի, Նորավանի, Անգեղակոթի համայնքների նախադպրոցական ուսումնական հաստատությունները Սիսիանի համայնքի նախադպրոցական ուսումնական հաստատությունների հետ միացման ձևով վերակազմակերպելու մասին» թիվ 22(Ա) որոշումը:
2. Սույն որոշումը չեղյալ է ճանաչվում ընդունման պահից:

Կողմ -13

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԱՅՎԱԶՅԱՆ Վ.

2. ԱՌԱՔԵԼՅԱՆ Հ.Շ.

3. ԳԵՎՈՐԳՅԱՆ Գ.

4. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ Դ.

5. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ Հ.

6. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Ա.

7. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Գ.

8. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Է.

9. ՂԱՐԻՔՅԱՆ Բ.

10. ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ Ա.

11. ՆԵՐՍԻՍՅԱՆ Ն.

12. ՊՈՂՈՍՅԱՆ Վ.

13. ԱՏԵՓԱՆՅԱՆ Բ.

Համայնքի ղեկավար



Ա. Սարգսյան

2018թ մարտի 13
ք.Սիսիան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

13 մարտի 2018 թվականի թիվ 23-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 05-Ի ԹԻՎ 234-Ա, 235-Ա, 237-Ա ԵՎ 238-Ա
ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, «ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԻՎ 1 ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ», «ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԻՎ 2
ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ», «ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ԹԻՎ 3 ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ», «ՍԻՍԻԱՆԻ
ՀԱՄԱՅՆՔԻ ԹԻՎ 4 ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ»
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ
ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 63-րդ հոդված 1-ին մասով, 64-րդ հոդվածով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասով, 13-րդ հոդվածի 2-րդ մասի դ) կետով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասով և նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով 13 կողմ, - դեմ, - ձեռնպահ

Սիսիանի համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի ղեկավարի 2018 թվականի մարտի 05-ի «Անգեղակոթի համայնքի նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը և «Շաղատի համայնքի նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը «Սիսիանի համայնքի թիվ 1 նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության հետ միացման ձևով վերակազմակերպելու մասին» թիվ 234-Ա որոշումը:
2. Հաստատել «Սիսիանի համայնքի թիվ 1 նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության ընդհանուր դրույթներ գլխի 1-ին կետում կատարվող փոփոխությունը՝ համաձայն հավելված 1-ի:

3. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի ղեկավարի 2018 թվականի մարտի 05-ի «Աղիտու համայնքի նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը, «Նորավան համայնքի նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը և «Դարբաս համայնքի նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը «Սիսիանի համայնքի թիվ 2 նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության հետ միացման ձևով վերակազմակերպելու մասին» թիվ 235-Ա որոշումը:
4. Հաստատել «Սիսիանի համայնքի թիվ 2 նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության ընդհանուր դրույթներ գլխի 1-ին կետում կատարվող փոփոխությունը՝ համաձայն հավելված 2-ի:
5. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի ղեկավարի 2018 թվականի մարտի 05-ի ««Ույծի համայնքի նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը «Սիսիանի համայնքի թիվ 3 նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության հետ միացման ձևով վերակազմակերպելու մասին» թիվ 237-Ա որոշումը:
6. Հաստատել «Սիսիանի համայնքի թիվ 3 նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության ընդհանուր դրույթներ գլխի 1-ին կետում կատարվող փոփոխությունը՝ համաձայն հավելված 3-ի:
7. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի ղեկավարի 2018 թվականի մարտի 05-ի ««Շաքի համայնքի նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը և «Բռնակոթի համայնքի նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը «Սիսիանի համայնքի թիվ 4 նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության հետ միացման ձևով վերակազմակերպելու մասին» թիվ 238-Ա որոշումը:
8. Հաստատել «Սիսիանի համայնքի թիվ 4 նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության ընդհանուր դրույթներ գլխի 1-ին կետում կատարվող փոփոխությունը՝ համաձայն հավելված 4-ի:


Կողմ -13


Դեմ -0


Ձեռնպահ -0


1. ԱՅՎԱԶՅԱՆ Վ. 

2. ԱՌԱՔԵԼՅԱՆ Հ.Հ. 

3. ԳԵՎՈՐԳՅԱՆ Գ. 

4. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ Դ. 

5. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ Հ. 

6. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Ա. 

7. ՀՈԿԱՆՆԻՍՅԱՆ Գ. *ghev*

8. ՀՈԿԱՆՆԻՍՅԱՆ Է. *[Signature]*

9. ՂԱՐԻԲՅԱՆ Բ. *[Signature]*

10. ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ Ա. *[Signature]*

11. ՆԵՐՍԻՍՅԱՆ Ն. *[Signature]*

12. ՊՈՂՈՍՅԱՆ Վ. *[Signature]*

13. ՍՏԵՓԱՆՅԱՆ Բ.

Համայնքի ղեկավար



Ա. Սարգսյան


2018թ մարտի 13
ք Սիսիան

«Սիսիանի համայնքի թիվ 1 նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝ ընդհանուր դրույթներ գլխի 1-ին կետը լրացնել նոր պարբերությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

1. «Սիսիանի համայնքի թիվ 1 նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը (պետական գրանցման համարը՝ 88.210.00891, 01.03.2006թ.) հանդիսանում է «Շաղատի համայնքի նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության (պետական գրանցման համարը՝ 88.210.00978, 28.12.2007թ.) և «Անգեղակոթի համայնքի նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության (պետական գրանցման համարը՝ 88.210.00899, 18.04.2006թ.) իրավահաջորդը՝ փոխանցման ակտին համապատասխան:

Սույն փոփոխությունը հանդիսանում է «Սիսիանի համայնքի թիվ 1 նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության 28.11.2014թ. գրանցված նոր խմբագրությամբ կանոնադրության բաղկացուցիչ մասը:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏ



Վ. ՄԻՐԱԲՅԱՆ

«Սիսիանի համայնքի թիվ 2 նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝ ընդհանուր դրույթներ գլխի 1-ին կետը լրացնել նոր պարբերությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

1. «Սիսիանի համայնքի թիվ 2 նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը (պետական գրանցման համարը՝ 88.210.00888, 01.03.2006թ.) հանդիսանում է «Աղիտու համայնքի նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության (պետական գրանցման համարը՝ 88.210.01067, 20.08.2010թ.), «Նորավան համայնքի նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը (պետական գրանցման համարը՝ 88.215.945868, 14.02.2017թ.) և «Դարբաս համայնքի նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը (պետական գրանցման համարը՝ 88.210.00927, 11.12.2006թ.) իրավահաջորդը՝ փոխանցման ակտին համապատասխան:

Սույն փոփոխությունը հանդիսանում է «Սիսիանի համայնքի թիվ 2 նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության 04.12.2014թ. գրանցված նոր խմբագրությամբ կանոնադրության բաղկացուցիչ մասը:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒ



Վ. ՄԻՐԱԲՅԱՆ

«Սիսիանի համայնքի թիվ 3 նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝ ընդհանուր դրույթներ գլխի 1-ին կետը լրացնել նոր պարբերությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

1. «Սիսիանի համայնքի թիվ 3 նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը (պետական գրանցման համարը՝ 88.210.00890, 01.03.2006թ.) հանդիսանում է «Ույծի համայնքի նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության (պետական գրանցման համարը՝ 88.210.00909, 09.08.2006թ.) իրավահաջորդը՝ փոխանցման ակտին համապատասխան:

Սույն փոփոխությունը հանդիսանում է «Սիսիանի համայնքի թիվ 3 նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության 26.11.2014թ. գրանցված նոր խմբագրությամբ կանոնադրության բաղկացուցիչ մասը:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏԻ




Վ. ՄԻՐԱԲՅԱՆ

«Սիսիանի համայնքի թիվ 4 նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝ ընդհանուր դրույթներ գլխի 1-ին կետը լրացնել նոր պարբերությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

1. «Սիսիանի համայնքի թիվ 4 նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը (պետական գրանցման համարը՝ 88.210.00889, 01.02.2006թ.) հանդիսանում է «Շաքի համայնքի նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության (պետական գրանցման համարը՝ 88.210.01033, 26.06.2009թ.) և «Բռնակոթի համայնքի նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության (պետական գրանցման համարը՝ 88.210.00895, 03.04.2006թ.) իրավահաջորդը՝ փոխանցման ակտին համապատասխան:

Սույն փոփոխությունը հանդիսանում է «Սիսիանի համայնքի թիվ 4 նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության 01.12.2014թ. գրանցված նոր խմբագրությամբ կանոնադրության բաղկացուցիչ մասը:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏ



Վ. ՄԻՐԱԲՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

13 մարտի 2018 թվականի թիվ 24-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի ԹԻՎ 26(Ն) ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածով և 70-րդ հոդվածի 5-րդ կետով ու նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով 13 կողմ, — դեմ, — ձեռնպահ

Սիսիանի համայնքի ավագանին որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 12-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի սեփականություն համարվող գույքի (հողամասերի, շենքերի և շինությունների) օտարման 2018 թվականի ծրագիրը հաստատելու մասին» թիվ 26(Ն) որոշման մեջ կատարել լրացում և որոշման հավելվածը լրացնել 9) կետով՝ համաձայն հավելվածի:
2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Կողմ -13

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԱՅՎԱԶՅԱՆ Վ.


2. ԱՌԱՔԵԼՅԱՆ Հ.Հ.

3. ԳԵՎՈՐԳՅԱՆ Գ.

- 4. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ Դ.
- 5. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ Հ.
- 6. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Ա.
- 7. ՀՈԿՀԱՆՆԻՍՅԱՆ Գ.
- 8. ՀՈԿՀԱՆՆԻՍՅԱՆ Է.
- 9. ՂԱՐԻՔՅԱՆ Բ.
- 10. ՄԻՐԱԿԱՆՅԱՆ Ա.
- 11. ՆԵՐՍԻՍՅԱՆ Ն.
- 12. ՊՈՂՈՍՅԱՆ Վ.
- 13. ՍՏԵՓԱՆՅԱՆ Բ.

[Handwritten signatures corresponding to the list items above]

Համայնքի ղեկավար



Ա. Սարգսյան

2018թ մարտի 13
ք.Սիսիան

Հավելված
 ՀՀ Սյունիքի մարզի Սիսիանի
 համայնքի ավագանու
 2018 թվականի մարտի 13-ի
 թիվ 24-Ն որոշման

ՀՀ Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 12-ի
 թիվ 26(Ն) որոշման հավելվածում կատարվող լրացումը

Հ/հ	Օտարվող գույքի վկայականի համարը և ծածկագիրը	Օտարվող գույքի հասցեն	Օտարվող գույքի մակերեսը, քմ	Օտարման նպատակը	Օտարման ժամկետները	Գույքի օտարման մեկնարկային գինը ՀՀ դրամով՝ ըստ գուտիների	Հողամասի գործառնական նշանակությունը և կատեգորիան
9	վկ. 26072017-09-0022 ծածկ. 09-006-0036-0010	Գայի փ 13/11-1	140	կառուցապատում	II կիսամյակ	47880	Բնակավայրերի հասարակական կառուցապատման
	ԸՆԴԱՄՆՆԸ					47880	

Աշխատակազմի քարտուղ



Վ. Միրաբյան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

ՈՐՈՇՈՒՄ

13 մարտի 2018 թվականի թիվ 25-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ՍԵՓԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ
ՍԽԵՄԱՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի օգոստոսի 9-ի թիվ 980-Ն որոշումն ու նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով 13 կողմ, - դեմ, - ձեռնպահ

Սիսիանի համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի սեփականություն հանդիսացող, կառուցապատման նպատակով նախատեսվող հողամասերի օգտագործման սխեմաները՝ համաձայն 1 և 2 հավելվածների:
2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Կողմ -13

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԱՅՎԱԶՅԱՆ Վ.

2. ԱՌԱՔԵԼՅԱՆ Հ.Հ.

3. ԳԵՎՈՐԳՅԱՆ Գ.

4. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ Դ.

5. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ Հ.

6. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Ա.

7. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Գ.

8. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Է.

9. ՂԱՐԻՔՅԱՆ Բ.

10. ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ Ա.

11. ՆԵՐՍԻՍՅԱՆ Ն.

12. ՊՈՂՈՍՅԱՆ Վ.

13. ԱՏԵՓԱՆՅԱՆ Բ


Համայնքի ղեկավար



Ա. Սարգսյան


2018թ. մարտի 13
ք.Ախիան


Հավելված 1
ՀՀ Սյունիքի մարզի
Սիսիանի համայնքի ավագանու
2018թ. մարտի 13 - ի թիվ 25-Ա որոշման



Հատկացվող տարածք 20քմ

Սիսիանի համայնքի ղեկավար Ա. Սարգսյան




 Հատկացվող տարածք 1000քմ

Միսիանի համայնքի ղեկավար



Ա. Սարգսյան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

ՈՐՈՇՈՒՄ

13 մարտի 2018 թվականի թիվ 26-Ա

**ՔԱՂԱՔԱՅԻ ԻՎԱՆ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ
ՀՈՂԱՄԱՍ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 21-րդ կետով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 89-րդ հոդվածի առաջին մասով և Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածի առաջին մասով և 596-րդ հոդվածով, նկատի ունենալով, որ քաղաքացի Իվան Ալբերտի Պետրոսյանը սեփականության իրավունքով իրեն պատկանող 0.13հա հողամասը համայնքին է հանձնել՝ համայնքում տուրիզմի զարգացման նպատակով կառուցապատում իրականացնելու համար և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով 13 կողմ, - դեմ, - ձեռնպահ

Սիսիանի համայնքի ավագանին որոշում է՝

1. ՀՀ Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի սեփականություն հանդիսացող 0.379հա գյուղատնտեսական նշանակության հողամասը (ծածկ. 09-006-322-009) նվիրել քաղաքացի Իվան Ալբերտի Պետրոսյանին՝ գյուղատնտեսական մշակաբույսերի մշակության նպատակով:
2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Կողմ -13

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԱՅՎԱԶՅԱՆ Վ.

2. ԱՌԱՔԵԼՅԱՆ Հ.Հ.

3. ԳԵՎՈՐԳՅԱՆ Գ.

4. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ Դ.

5. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ Հ.

6. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Ա.

Handwritten signature

7. ՀՈՎԿԱՆՆԻՍՅԱՆ Գ.

Handwritten signature

8. ՀՈՎԿԱՆՆԻՍՅԱՆ Է.

Handwritten signature

9. ՂԱՐԻԲՅԱՆ Բ.

10. ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ Ա.

Handwritten signature

11. ՆԵՐՍԻՍՅԱՆ Ն.

Handwritten signature

12. ՊՈՂՈՍՅԱՆ Վ.

Handwritten signature

13. ԱՏԵՓԱՆՅԱՆ Բ.

Համայնքի ղեկավար



Handwritten signature

Ա. Սարգսյան

2018թ մարտի 13
ք.Սիսիան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

ՈՐՈՇՈՒՄ

13 մարտի 2018 թվականի թիվ 27-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ, ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԻՆ ՈՒՂՂՎԱԾ ՍԵՓԱԿԱՆ
ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԼՈՒԾՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածով, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով 13 կողմ, - դեմ, - ձեռնպահ

Սիսիանի համայնքի ավագանին որոշում է՝

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի կամավոր խնդիրները, կամավոր խնդիրներին ուղղված սեփական լիազորությունները և դրանց լուծման նպատակով իրականացման կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2018 թվականի ապրիլի 1-ից:

Կողմ -13

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԱՅՎԱԶՅԱՆ Վ.

2. ԱՌԱՔԵԼՅԱՆ Հ.Հ.

3. ԳԵՎՈՐԳՅԱՆ Գ.

4. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ Դ.

5. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ Հ.

6. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Ա.

7. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Գ.

8. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Է.

9. ՂԱՐԻՔՅԱՆ Բ.

10. ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ Ա.

11. ՆԵՐՍԻՍՅԱՆ Ն.

12. ՊՈՂՈՍՅԱՆ Վ.

13. ԱՏԵՓԱՆՅԱՆ Բ.

Համայնքի ղեկավար՝



Ա. Սարգսյան

2018թ մարտի 13
ք. Ախիան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՄԱՎՈՐ
ԽՆԴԻՐՆԵՐԸ, ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԻՆ ՈՒՂՂԱԾ ՍԵՓԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ
ԴՐԱՆՑ ԼՈՒԾՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ**

1. Սույն կարգով սահմանվում են Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի (այսուհետև՝ համայնք) կամավոր խնդիրների և դրանց լուծման նպատակով համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների սեփական լիազորությունների և դրանց իրականացման հետ կապված հարաբերությունները:
2. Համայնքի կամավոր խնդիրներն են՝
 - 1) համայնքի սոցիալապես անապահով բնակչության սոցիալական օգնության տրամադրման կազմակերպումը.
 - 2) պետական բարձրագույն և (կամ) միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններում, ոչ պետական ուսումնական հաստատություններում (պետական հավատարմագրում ունեցող մասնագիտությունների գծով) սովորող համայնքի սոցիալապես անապահով ընտանիքների ուսանողների ուսման վարձի մասնակի հատուցումը.
 - 3) համայնքի հանրակրթական դպրոցների գործունեության աջակցումը.
 - 4) զոհված զինծառայողների, զինծառայողների, պատերազմի վետերանների, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների սոցիալական պայմանների բարելավման աջակցումը.
 - 5) միջհամայնքային միավորումների ստեղծումը, ինչպես նաև համայնքների հիմնադրած միություններին անդամակցությունը:
3. Համայնքի կամավոր խնդիրների լուծման նպատակով համայնքի ավագանին և համայնքի ղեկավարը իրականացնում են հետևյալ սեփական լիազորությունները՝
 - 1) միջոցներ են ձեռնարկում զոհված զինծառայողների, զինծառայողների, պատերազմի վետերանների, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման ուղղությամբ.
 - 2) աջակցություն են ցուցաբերում միայն պետական բարձրագույն և (կամ) միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններում, ոչ պետական ուսումնական հաստատություններում (պետական հավատարմագրում ունեցող մասնագիտությունների գծով) սովորող համայնքի սոցիալապես անապահով ընտանիքների ուսանողների ուսման վարձի վճարման կազմակերպմանը.
 - 3) նպաստում են համայնքի հանրակրթական դպրոցների գործունեության կազմակերպմանը.
 - 4) տեղական ինքնակառավարման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով կամ հանրային շահերից ելնելով ստեղծում են միջհամայնքային միավորումների, ինչպես նաև անդամակցում համայնքների հիմնադրած միություններին:
4. Համայնքի կամավոր խնդիրների և դրանց լուծման համար սեփական լիազորությունների իրականացման համար համայնքի բյուջեով նախատեսված ֆինանսական միջոցները չեն կարող գերազանցել համայնքի այդ տարվա բյուջեով նախատեսված սեփական եկամուտների մինչև 1%-ը:
5. Կամավոր խնդիրների լուծման համար ֆինանսական միջոցների հատկացումը իրականացնում է համայնքի ղեկավարը՝ համայնքի բյուջեով նախատեսված հատկացումներին համապատասխան:
6. Այն դեպքում, երբ համայնքի ղեկավարի կողմից կամավոր խնդիրների լուծման համար չի պահանջվում ֆինանսական և գույքային միջոցների հատկացում՝ համայնքի ղեկավարը դրանք իրականացնում է ինքնուրույն և սեփական պատասխանատվությամբ:
7. Կամավոր խնդիրների լուծման իրականացման առաջարկություն կարող են նախաձեռնել համայնքի ղեկավարը, համայնքի ավագանու անդամները, բնակիչները, հասարակական կազմակերպությունները և միավորումները, ինչպես նաև քաղաքացիական հասարակության այլ ինստիտուտներ, նշելով դրա նպատակը, խնդրի կարգավորման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցի չափը և անհրաժեշտության հիմնավորումը հավաստող փաստաթղթեր, եթե դրանք առկա են:
8. Համայնքի ղեկավարը դիմումը և անհրաժեշտ փաստաթղթերն ստանալուց հետո այն

- 1) 10-օրյա ժամկետում ճշտում է դրանց արժանահավատությունը, հաշվարկում կամավոր խնդրի իրականացման համար գումարի մեծությունը և կազմում է եզրակացություն աջակցության տրամադրման կամ մերժման.
- 2) կազմում է համայնքի ղեկավարի որոշման նախագիծը. որի մեջ նշվում են՝ կամավոր խնդրի իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցի չափը և անհրաժեշտության հիմնավորումը, իսկ կամավոր խնդրի լուծման իրականացումը մերժելու դեպքում՝ մերժելու պատճառները, փաստական և իրավական հիմքերը:
9. Համայնքի ղեկավարը զոհված զինծառայողների, զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկելու նպատակով՝ իր որոշմամբ կազմում է մշտական գործող հանձնաժողով:
10. Համայնքի սոցիալապես անապահով բնակչի հուղարկավորության կազմակերպման համար օգնության տրամադրման համար համայնքի ղեկավարը կարող է իր որոշմամբ նրա ընտանիքին հատկացնել 50000 դրամ սոցիալական օգնության համար բյուջեով նախատեսված միջոցներից:
11. Սոցիալական օգնության տրամադրման վերաբերյալ դիմումները մշտական գործող հանձնաժողովի կողմից քննարկելուց հետո, հանձնաժողովը տալիս է կամավոր խնդրի լուծման իրականացման համար եզրակացություն, նշելով անհրաժեշտ ֆինանսական միջոցի հատկացման չափը և անհրաժեշտությունը:
12. Սոցիալական օգնության տրամադրման վերաբերյալ կամավոր խնդիրների լուծման չափորոշիչներն են՝
 - 1) համայնքի բնակիչ հանդիսանալը.
 - 2) սոցիալապես անապահով ընտանիք հանդիսանալու վերաբերյալ սոցիալական օգնության տրամադրման մշտական գործող հանձնաժողովի դրական եզրակացությունը.
 - 3) համայնքի բյուջեի նկատմամբ հարկային պարտականությունների բարեխիղճ կատարումը և սոցիալական օգնության տրամադրման դիմումի ներկայացման ժամանակ տեղական հարկերի, տուրքերի, վարձավճարների վերաբերյալ պարտք չունենալը.
 - 4) համայնքի ղեկավարի, ավագանու անդամի, համայնքապետարանի աշխատակազմի և համայնքային ենթակայության կազմակերպության աշխատակից հանդիսացող անձանց հետ համատեղ տնտեսություն չվարելը:
13. Սոցիալապես անապահով ընտանիքներին հատկացվող մեկանգամյա սոցիալական օգնության առավելագույն չափը սահմանվում է մինչ 30000 դրամ: Նույն ընտանիքին տարվա ընթացքում սոցիալական օգնություն կարող է հատկացվել առավելագույնը 2 անգամ, որի չափը չի կարող գերազանցել սոցիալական օգնության առավելագույն չափի 1,5-պատիկի չափը: Արգելվում է սոցիալական օգնության հատկացումը համայնքի ավագանու անդամի, համայնքի ղեկավարի, համայնքապետարանի աշխատակազմի և համայնքային ենթակայության կազմակերպության աշխատակից հանդիսացող անձանց և նրանց ընտանիքի անդամներին:
14. Սոցիալապես անապահով ընտանիքների ուսանողներին ուսման վարձի հատկացումը կարող է իրականացվել միայն պետական բարձրագույն և (կամ) միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններում, ոչ պետական ուսումնական հաստատություններում (պետական հավատարմագրում ունեցող մասնագիտությունների գծով) սովորելու դեպքում և առավելագույնը կարող է հատկացվել տարեկան մեկ անգամ՝ ոչ ավելի քան տարեկան ուսման վարձի 30%-ի չափով: Ուսման վարձի հատկացում չի արվում ավագանու անդամի, համայնքի ղեկավարի, համայնքապետարանի աշխատակազմի և համայնքային ենթակայության կազմակերպության աշխատակից հանդիսացող անձանց հետ մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձանց (ծնող, ամուսին, զավակ, եղբայր, քույր), եթե նրանք վարում են համատեղ տնտեսություն:
15. Սույն կարգի խախտմամբ տրամադրված սոցիալական օգնության գումարները ենթակա են վերադարձման համայնքի բյուջե:





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

13 մարտի 2018 թվականի թիվ 28-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԱՀՄԱՆՎՈՂ ՀԱՎԵԼԱՎՃԱՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ և 7-րդ մասերով և «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 1-ի մասի բ) կետով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածով ու նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով 13 կողմ, - դեմ, - ձեռնպահ

Սիսիանի համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել Սիսիանի համայնքապետարանի աշխատակազմում համայնքային ծառայության տվյալ պաշտոնի ենթախմբին համապատասխանող դասային աստիճանից բարձր դասային աստիճան ունենալու համար պաշտոնային դրույքաչափի նկատմամբ սահմանվող հավելավճարի կիրառման կարգը և չափերը՝ համաձայն թիվ 1 հավելվածի:
2. Հաստատել համայնքային ծառայության բնագավառում աշխատակազմի համայնքային ծառայողների Սիսիանի համայնքապետարանի աշխատակազմում ունեցած երկար տարիների աշխատանքային ստաժի համար սահմանվող հավելավճարի կիրառման կարգը և դրանց չափերը՝ համաձայն թիվ 2 հավելվածի:
3. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2018 թվականի ապրիլի 1-ից:

Կողմ -13

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԱՅՎԱԶՅԱՆ Վ.

2. ԱՌԱՔԵԼՅԱՆ Հ.Հ.

3. ԳԵՎՈՐԳՅԱՆ Գ.

- 4. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ Դ.
- 5. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ Հ.
- 6. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Ա.
- 7. ՀՈԿՀԱՆՆԻՍՅԱՆ Գ.
- 8. ՀՈԿՀԱՆՆԻՍՅԱՆ Է.
- 9. ՂԱՐԻԲՅԱՆ Բ.
- 10. ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ Ա.
- 11. ՆԵՐՍԻՍՅԱՆ Ն.
- 12. ՊՈՂՈՍՅԱՆ Վ.
- 13. ԱՏԵՓԱՆՅԱՆ Բ.

(Handwritten signatures corresponding to the list items)

Համայնքի ղեկավար՝

(Handwritten signature)



Ս. Մարգարյան

Կ Ա Ր Գ

Սիսիանի համայնքապետարանի աշխատակազմում համայնքային ծառայության տվյալ պաշտոնի ենթախմբին համապատասխանող դասային աստիճանից բարձր դասային աստիճան ունենալու համար պաշտոնային դրույքաչափի նկատմամբ սահմանված հավելավճարի կիրառման և դրա չափը

1. Սույն կարգով սահմանվում է Սիսիանի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայողների զբաղեցրած պաշտոնի ենթախմբին համապատասխանող դասային աստիճանից բարձր դասային աստիճանի համար աշխատանքի վարձատրության պաշտոնային դրույքաչափի նկատմամբ հավելավճարի կիրառման կարգը և դրա չափը:
2. Հավելավճարը սահմանվում է այն համայնքային ծառայողների համար, ովքեր «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով ստացել են համայնքային ծառայության տվյալ պաշտոնի ենթախմբին համապատասխանող դասային աստիճանից ավելի բարձր դասային աստիճաններ և կիրառվում է ավելի բարձր դասային աստիճանը շնորհելու ամսվան հաջորդող ասվա մեկից:
3. Սիսիանի համայնքապետարանի աշխատակազմում համայնքային ծառայության տվյալ պաշտոնի ենթախմբին համապատասխանող դասային աստիճանից բարձր դասային աստիճան ունենալու համար հավելավճարի տրամադրման դեպքում համայնքային ծառայողի պաշտոնային դրույքաչափի նկատմամբ կիրառվում է տոկոսային ավելացում 5%-ի չափով՝ ավելի բարձր դասային աստիճանի համար, շնորհված նաև այլ համայնքների աշխատակազմերում:
4. Համայնքային ծառայության տվյալ պաշտոնի ենթախմբին համապատասխանող դասային աստիճանից ավելի բարձր դասային աստիճան ունենալու համար հավելավճարը յուրաքանչյուր ամիս վճարվում է աշխատավարձի հետ միասին՝ ընդհանուր գումարով:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂ



Կ. ՄԻՐԱԲՅԱՆ

Կ Ա Ր Գ

Համայնքային ծառայության բնագավառում աշխատակազմի համայնքային ծառայողների Սիսիանի համայնքապետարանի աշխատակազմում ունեցած երկար տարիների աշխատանքային ստաժի համար պաշտոնային դրույքաչափի նկատմամբ սահմանված հավելավճարի կիրառման և դրանց չափերը

1. Սույն կարգով սահմանվում է համայնքային ծառայության բնագավառում աշխատակազմի համայնքային ծառայողների Սիսիանի համայնքապետարանի աշխատակազմում ունեցած երկար տարիների՝ առնվազն 5 տարվա աշխատանքային ստաժի համար պաշտոնային դրույքաչափի նկատմամբ հավելավճարի կիրառման կարգը և չափերը:
2. Աշխատանքային ստաժի համար հավելավճարը տրվում է այն համայնքային ծառայողներին, որոնց աշխատանքային ստաժում ընդգրկվում է այն աշխատանքը կամ ծառայությունը, որի համար անձը կրել է Սիսիանի համայնքապետարանի աշխատակազմում շնորհված դասային աստիճաններ:
3. Երկար տարիների աշխատանքային ստաժի համար հավելավճարը համայնքային ծառայողի պաշտոնային դրույքաչափի նկատմամբ կիրառվում է տոկոսային ավելացմամբ 5-ից 10 տարի աշխատանքային ստաժի դեպքում 5%-ի չափով, 10-ից ավել տարիներին՝ 10%-ի չափով և կիրառվում է սահմանված աշխատանքային ստաժի լրանալու ամսվան հաջորդող ամսվա մեկից:
4. Համայնքապետարանի աշխատակազմում ունեցած երկար տարիների աշխատանքային ստաժի համար հավելավճարը յուրաքանչյուր ամիս վճարվում է աշխատավարձի հետ միասին՝ ընդհանուր օրվաչափով:



ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Վ. ՄԻՐԱԲՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

ՈՐՈՇՈՒՄ

13 մարտի 2018 թվականի թիվ 29-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի ԹԻՎ 24(Ա) ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ կետով և նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով 13 կողմ, - դեմ, - ձեռնպահ

Սիսիանի համայնքի ավագանին որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 12-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի մասին» թիվ 24(Ա) որոշման մեջ կատարել լրացումներ և որոշման 1-ին կետի հավելվածը լրացնել.
 - 1) «8.Օսաննա Մարկոսյան - համայնքապետարանի աշխատակազմի կազմակերպական բաժնի պետի տեղակալ, հանձնաժողովի անդամ»,
 - 2) «9.Լիաննա Հայրապետյան - կրթության, մշակույթի, սպորտի, երիտասարդության, առողջապահության և սոցիալական հարցերի բաժնի գլխավոր մասնագետի ժ/պ, հանձնաժողովի անդամ»:
2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Կողմ -13

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԱՅՎԱԶՅԱՆ Վ.

2. ԱՌԱՔԵԼՅԱՆ Հ.Շ.

3. ԳԵՎՈՐԳՅԱՆ Գ.

4. ՀԱՄԲԱՐՉՈՒՄՅԱՆ Դ.

5. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ Հ.

6. ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ

7. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Գ. *ghev*

8. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Է. *[Signature]*

9. ՂԱՐԻԲՅԱՆ Բ. *[Signature]*

10. ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ Ա. *[Signature]*

11. ՆԵՐՍԻՍՅԱՆ Ն. *[Signature]*

12. ՊՈՂՈՍՅԱՆ Վ. *[Signature]*

13. ՍՏԵՓԱՆՅԱՆ Բ.

Համայնքի ղեկավար՝

Վեյ  Սարգսյան

2018թ մարտի 13
ք.Սիսիան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

ՈՐՈՇՈՒՄ

13 մարտի 2018 թվականի թիվ 30-Ա

**ԴԱՇՆԱԳԻՐ ՍՏՈՐԱԳՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ԿԱՅՈՒՆ
ԷՆԵՐԳԵՏԻԿ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՄՇԱԿՄԱՆ
ՈՒ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ և 25-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով համայնքի ղեկավարի այլ միջոցների ներգրավմամբ համայնքում կայուն զարգացում ապահովելու նպատակով ծրագրերի մշակման և իրականացման առաջարկությունը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով 13 կողմ, - դեմ, - ձեռնպահ.

Սիսիանի համայնքի ավագանին որոշում է՝

1. Համաձայնություն տալ Սիսիանի համայնքի ղեկավարին միանալու Եվրոպական հանձնաժողովի «Քաղաքապետերի Դաշնագիր Արևելք» նախաձեռնությանը և ստորագրելու դաշնագիրն ու աջակցելու կայուն էներգետիկ գործողությունների ծրագրի /ԿԷԶԳԾ/ մշակմանն ու իրականացմանը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -13

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԱՅՎԱԶՅԱՆ Վ.

2. ԱՌԱՔԵԼՅԱՆ Հ.Հ.

3. ԳԵՎՈՐԳՅԱՆ Գ.

4. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ Դ.

5. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ Հ.

6. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Ա.

7. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Գ.

8. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Է.

9. ՂԱՐԻՔՅԱՆ Բ.

10. ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ Ա.

11. ՆԵՐՍԻՍՅԱՆ Ն.

12. ՊՈՂՈՍՅԱՆ Վ.

13. ՍՏԵՓԱՆՅԱՆ Բ.

Համայնքի ղեկավար



Ա. Սարգսյան

2018թ. մարտի 13
ք Սիսիան